




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ

Գիտական, Գրագիտական, Արուեստագիտական
և Մանկավարժական



1902 ՄԱՐՏ 10 — ԹԻԻ 15

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՅԱՆ





ՀԱՆԳԻՏ

ՏԱՍՆՕՐԵԱՅ

— هانراکیداگ —

مجموعه علوم

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 15

10 ՄԱՐՏ 1902



ՇԻՆԱԿԱՆ ԱՂՋԻԿԸ

ՇԵՆՍԱԿԱՆ ԱՂՋԻԿ

Սա փոքր աղջիկն եմ շինական
Միշտ զուարթուն միշտ երջանիկ,
Լեռներ, դաշտեր իմ պատուանդան,
Սիրականներս՝ բոշուն ծաղիկ:

Մերք կը վազեմ գառներուս ֆով,
Գզուել զանոնք ու համբուրել,
Մերք կը փութամ տեսնել իմ կով,
Կթել անոր կաթն անարգել:

Յեսոյ կ'երթամ գտնել իմ հոս,
Որ տեսնելուն զիս կը կայքեն,
Ձեռնովս կուտամ ես խոտ,
Ու բուրդերնին խուզեմ անդին:

Սագեր ունիմ ձիւն սպիտակ
Որ սուշելով զիս կ'ողջունեն,
Բալեր ունիմ պիտակ պիտակ,
Որք պատ ի պատ ինձ կը դիմեն:

Լեռներ, դաշտեր եմ իմ պարտեզ
Ուր համարձակ կ'ուզամ ես ծուռ,
Խոտ ու ծաղիկ քաղեմ պէս պէս,
Պննազարդել մագերս գանգուր:

Ու ցերեկին մինչ արեգակ
Գլխուս վերեւ կանգնի փառֆով,
Կ'երթամ ննջել ծառի մը տակ
Ձինջ առուակին հեռ մոմունջով:

Դիւերային երազներս եմ
Համակ ծիծաղ հեռ ու արթուն,
Սոխակները կ'երգեն արդէն՝
Հրնուեցնեն սիրս մարդուն:

Սա փոքրիկ աղջիկն եմ շինական
Միշտ զուարթուն միշտ երջանիկ
Ազատ դաշտերն եմ իմ խորան
Ուր կ'աղօթեմ լռիկ մնջիկ:

ՄԱԹԻՏ ԼԷՅԱՆԵԱՆ



ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴԵՌԱՏԻ ԳԼՈՒԽԸ

ՁԻՆԱԿԱՆ ՎԻՊԱԿ

Ժամակաւ ընտանիք մը կար, անդամ-
ներն էին հայր մը, երեք որդիներ, երկու
հարսեր: Այս հարսերը երկու երէց որդի-
ներուն կիներն էին: Երկուքն ալ իրենց
կեսրայրին տունէն քանի մը միտն հեռու
գտնուող գիւղէ մը եկած էին: Իրենք դեռ
այս տունը չեկած, կեսուրինն մեռած էր.
ուստի գլուխ մը չունէին: Շատ անգամ իրենց
մօրը քով, իրենց առջի տունը երթալ կ'ու-
զէին, հիւանդութեան, տկարութեան և այս
տեսակ պատրուակներով կեսրայրէն հրաման
կ'առնէին ու կը մեկնէին տունէն: Խեղճ ծե-
րուկը տեսաւ որ ոչինչ պատճառներով տու-
նէն յաճախ բացակայ կը գտնուին, սկսաւ
բարկանալ ինքնիրեն, ուղեց հնարք մը բա-
նեցնել այս անտեղութեանց վերջ տալու
համար. վերջապէս գտաւ:

Օր մը հարսերը կրկին բացակայ գտնը-
ւելու համար, ծերուկ կեսրայրին քով եկան
թոյլտուութիւն խնդրելու համար: Ծերուկը
ըսաւ անոնց. «Դուք ստէպ ձեր մօր քով
երթալու հրաման կը խնդրէք, եթէ մերժեմ
պիտի խորհիք թէ շատ քարտիրոս մարդ եմ:
Այժմ դարձեալ պիտի թոյլատրեմ ձեզ, սա-
կայն պայման մ'ունիմ, ձեզմէ մէկը իր հետ
պիտի բերէ թուղթի մէջ փաթթուած քիչ
մը կրակ, իսկ միւսը՝ թուղթի մէջ փաթթու-
ած քիչ մը հով: Եթէ երբէք չխոստանաք
կատարել տառնք՝ պէտք չէ հրաման ուղէք
ձեր մայրերը տեսնելու, և եթէ երթաք ու
չբերէք՝ պէտք չէ այլ եւս հոս դաք:

Ծեր մարդուկը խորհեցաւ թէ պիտի չըն-
դունին այս պայմանը. բայց հարսերը դեռ
շատ մանկամարդ ու անխորհուրդ էին, ի-
րենց մայրը և ազգականները այցելելու
մարմաջով մի այս անկարելի յանձնարարու-
թիւնը յանձն առին: Շուտ մը պատրաստը-
ւեցան և մեծ հրճուանքով ճամբայ ելան հե-
տիոտն: Բաւական քաղցին, չաղակրատե-
ցին. մէկուն ոտքը սահեցաւ ու գետին ին-
կաւ: Այս արկածին պատճառաւ, յանկարծ
մտքերնին ինկաւ ծերուկին պայմանը, ա-
ռանց որու պիտի չկրնային վերադառնալ ի-

րենց ամուսիններուն քով: Ճամբուն վրայ նստան, ապուշ ապուշ լացին, ու մեծ ձայներով պօռացին:

Հոն հասաւ մատղաշ, յոյժ դեռատի օրիորդ մը որ ջրգոմէշի վրայ հեծած էր, անոնց քով մօտեցաւ ու հարցուց թէ ինչո՞ւ կուլային, համոզելով թէ թերեւս իրենց ցաւին դեղթափ մը կրնայ տալ. բայց անոնք իրենցմէ շատ պզտիկ այդպիսի աղջկան մը բան մ'ըսել չէին ուզեր. պզտիկ աղջիկը յամառաբար կրկնեց իր հարցումը, համակրանք ցուցնելով անոնց և վստահութիւննին հրաւիրել իր վրայ. մինչեւ որ պատմեցին իրողութիւնը: Պզտիկ աղջիկը տուն հրաւիրեց անոնց սորվեցնելու թէ ի՞նչ հնարք պէտք էր բանեցնել: Հարսերը յուսահատ, դեռատի աղջկան ցուցուցած վստահութենէն քաջալեր հետեւեցան անոր:

Երբոր տուն հասան, առաջինին համար տուաւ թուղթէ լապտեր մը, ինչ որ համապատասխան էր «թուղթի մէջ կրակ»ին, երկրորդին համար թուղթէ հողմահար մը՝ ինչ որ համապատասխան էր «թուղթի մէջ հով» ին:

Երկու մանկամարդ հարսերը շնորհակալ եղան փոքրիկ իմաստունին, ուրախութեամբ գիւղ հասան. իրենց մօր ու ազգականներուն հետ հաճելի ժամանց մը անցընելէ ետք աւին իրենց լապտերն ու հողմահարը. գացին իրենց կեսրայրին տունը: Ծերուկը երբ անոնք տեսաւ՝ բարկացաւ, խորհելով թէ իր պատուէրին կարեւորութիւն տուած չէին բայց երբ ցուցին իրենց բերածները զարմացաւ թէ ի՞նչպէս այսչափ իմաստուն գրտնուած էին: Հարսերը պատմեցին իրենց փոքրիկ իմաստուն աղատարարին ըրածները թէ ի՞նչպէս եկած հասած էր բարեբաղդաբար իրենց մտառանջութեան վերջ տալու:

Ծերուկը միւս առաւուր կանուխ ճամբայ ելաւ դէպ այդ աղջկան հօրը տունը. դնաց, գտաւ հայրը և իր կրտսեր որդւոյն կնութեան խնդրեց այդ պղտիկ աղջիկը. յաջողեցաւ առնել զայն ու հարսնիքը կատարուեցաւ: Ծերը քանի մը օր վերջ, բնականօրէն անդամներուն ծանոյց թէ, քանի որ իր կնոջ մահուամբ այս ընտանիքը գլուխ չունէր, այս փոքրիկ աղջիկը արժանի էր բնականաց գլուխ ըլլալու, իր տարապայման իմաստութեան համար:

Հարսանեաց խրախճանքի օրերը լրացած էին, ծերուկին որդիները իրենց սովորական զրադումին՝ արտը պէտք է երթային: Երկրին սովորութեան համեմատ ընտանեաց զուգին պէտք է խորհրդակցէին, և որովհետեւ իրենցմէ ամէնէն պզտիկն էր ընտանեաց գլուխը, անոր քով գացին:

Նա պատուիրեց անոնց որ երբէք պարսպ ձեռքով աչտէն չվերադառնան, արտ գացած ատեն հողին արգասաբերութեան նպաստող նիւթեր պէտք է տանէին և վարդարձած ատեն ձարխոտերու և չոր խոտերու խուրձեր պէտք է բերէին: Պատուէրը լիովին կատարուեցաւ, արդիւնքը շահաբեր եղաւ, որովհետեւ այդ տարին երկիրը արգասանդ վիճակ մը ունեցաւ և այնչափ վառելանիւթ հաւաքուեցաւ որ այն տարին երբէք վառելանիւթի պէտք չունեցան: Երբ արտը բոլորովին մաքրուեցաւ այս անհաշիւ նիւթերէն, ընտանեաց գլուխը պատուիրեց անոնց քար բերել, քիչ ատենէն քարի ահագին կոյտ մը գոյացաւ տան բակին մէջ:

Օր մը վարպետ գոհարավաճառ մը՝ որ թանկագին քարեր գտնելու համար կը պըտրտէր, պատահմամբ հոն եկաւ և քարակոյտին մէջ տեսաւ յասկաքարի խոշոր կտոր մը որ յարգի ու շատ սուղնոց էր: Այս քարը աժան գնով մը առնելու համար որչեց ամբողջ քարակոյտը գնել, պատրուակաւ թէ տան մը շինութեան համար պիտի գործածէր: Ընտանեաց գլուխը կանչուեցաւ սակարկութեան համար. փոքրիկ իմաստունը անհեթեթ գին մը առաջարկեց, մարդը աւելի վար գնի համոզել չկրնալով, խառտացաւ երկու օրէն գալ, ստակը բերել և քարերը փոխադրել: Դեռատի ընտանիքին գլուխը հասկցաւ որ քարակոյտին մէջ թանկագին քար մը կար. յաջորդ օրը կեսրայրը զրկեց գոհարավաճառը ընթրիքի հրաւիրելու. ընտանիքին միւս տնդամներուն իմացուց իր նպատակը: Գոհարավաճառին՝ ամէնէն լաւ դինին հրամցուած էր ընթրիքին ատեն, ան սիրով խմեց մինչեւ որ դատողութիւնը կորսնցուց: Ծերը համոզեց եւ գոհարավաճառը խօսեցաւ թանկ քարերու վրայ և ըստ ինչպէս կ'որոշուէին հասարակներէն: Դեռատի կինը վարադոյրի մը ետեւէն հասկցաւ ամէն ինչ. դնաց գտաւ, առաւ իր քարակոյտին մէջ գտնուող սուղնոց

յասակաքարը: Միւս օր մարդը երբ եկաւ ստակը վճարելու և քարերը փոխադրելու, տեսաւ թէ յասակաքարը անհետ եղած էր. ուզեց նորէն սակարկել ընտանեաց գլուխին հետ: Փոքրիկ իմաստունը այս անգամ ալ այնպիսի վարպետութեամբ խօսեցաւ որ քարակցային համար որոշուած աւջի գինը ըստանալէ վերջ մեծ գումար մըն ալ իր քով գտնուած այդ թանկագին քարին համար առաւ:

Յայտնի է թէ այսպիսի իմաստուն, հանձարեղ գլուխ ունեցող ընտանիք մը չուտ հարստացաւ:

Այս ընտանիքին անդամները իրենց դեռատի այլ յոյժ իմաստուն գլուխին տնօրինութեան ներքեւ կառուցանել տուին չքատեսիլ դահլիճ մը չքնաղ նկարներով և հոյակապ ձեռարուեստներով պաճուճուած: Ընտանեաց իմաստուն գլուխը դահլիճին մուտքին վրայ փորագրել տուաւ սա իմպուտալից նախադասութիւնը. « Զիք թախիժ աշխարհի »: Օր մը Մանտարին մը դահլիճին առջեւէն անցած ատեն կարդաց յայտ նշանաւոր արձանագրութիւնը, ուզեց գիտնալ թէ որո՞նք էին այն անձերը որոնք կը դաւաճեցին թէ « Զիք թախիժ յաշխարհի »: Կանչել տուաւ ընտանեաց գլուխը. շատ զարմացաւ երբ տեսաւ այդչափ փոքրիկ աղջիկ մը իբրեւ գլուխ ընտանիքի. ըսաւ. « Զերը եղական ընտանիք մըն է, մինչեւ հիմա ո՛չ առանց թախիժի ընտանիք մը տեսած եմ, ո՛չ ալ ընտանիք մը որ այսչափ դեռատի գլուխ մը ունենայ. ձեր անպարկեշտութեան իբր դատապարտութիւն պէտք է սա ամբուն չափ երկայն գորգ մը հիւսնա »:

— Շատ լաւ, պատասխանեց, փոքրիկ իմաստունը, երբ ձեր վսեմութիւնն հաճի այս ճամբուն երկու ծայրերը գտնել և ինձ տեղեկացնել քանի՜ կանգուն ըլլալը, այսօր պիտի սկսիմ հիւսել զայն:

Մանտարինը իր սխալմունքը զգալով ըսաւ. « Այն ատեն պէտք է որ ծովուն ջուրին չափ իւղ բերես ինձի »:

— Ինչո՞ւ չէ, յարեց փոքրիկ կինը, ձեր վսեմութիւնը ծովուն ջուրը ճշգիւ քանի հօսա ըլլալը չափած և ինձի տեղեկացուցածին պէ՞տք, պիտի վճարեմ իւղը »:

— Ստուգիւ, ըսաւ Մանտարինը, քանի որ այսչափ իմաստուն պատրաստաբան մը

ես, կրնաս իմ խերհուրդներս ալ թափանցել: Զեռքիս մէջ կաքաւ մը ունիմ, ըսէ տեսնեմ, կ'ուզե՞մ զայն խեղդել, թէ ոչ ազատ արձակել, եթէ ճիշդ մտքինս գիտնաս, պատժէ ազատ պիտի մնաք:


— Լաւ, յարեց մեր դիւցազնուհին՝ ընտանեաց գլուխը հղող, դեռատի, իմաստուն կինը. ես խաւարափառ ռամիկ մըն եմ, մինչ դուք համբաւաւոր պաշտօնակալ մըն էք. եթէ դուք ինձմէ աւելի չէք գիտեր իրաւունք չունիք ինձմէ պահանջելու եւ չգիտնալու համար պատժելու: Այժմ մէկ ոտքս սեմին մէկ կողմը, միւս ոտքս դրան սեմին միւս կողմը կայնած եմ, ըսէք ինձ թէ կ'ուզե՞մներս երթալ թէ դուրս գալ, թէ որ դուք իմ այս առեղծուածը չէք գիտնար, ի՞նչպէս կը համարձակիք ստիպել որ ես ձերինը գիտնամ:

Մանտարէնը այս իմաստուն և քաջ պատասխաններէն գոհ ու հաճ, չկրցաւ ուրիշ բան մ'ընել, այլ կտմայ մը հեռանալ, հիւանալով այդչափ փոքրիկ աղջկան մը ունեցած անսովոր իմաստութեան վրայ:

Այս ընտանիքը մեծ ճոխութեան ու փառքի մէջ, երջանիկ ու զուարթ կեանք մը վայելեց, իր ընտրեալ գլուխին խոհեմ ու խորագէտ տնօրինութեանց ներքեւ:

Թարգմ. Անգլ.

ՎՏԱԿ



ԶՈՐՍ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Բարիգի մօտաւոր գեղի մը մէջ մի և նոյն տարիքը ունեցող չորս պզտիկ տղայք ա՝ մէն օր դպրոց կ'երթային:

Ասոնց մէջէն երեքը, Պետրոս, Անտօն և Պօղոս, ամէն ատեն ճշգրտապէս էին դասերնուն ժամուն, և սատոյիկ եռանդով իրենց դասերը կը պատրաստէին, վասն զի սպագային մէջ կը փափաքէին ուսեալ և խելացի գործաւորներ ըլլալ:

Միայն անոնց մէջ Սիմօն ծոյլ էր, ստէպ ուշ կուգար դպրոց, ժամանակը զուր տեղը կ'անցունէր և դասերը լաւ չէր սորվեր:

Երբ եկաւ ժամանակը, ուր չորս պզտիկ տղայք այն տարիքը հասան, որ այնուհետեւ պէտք էր արհեստաւորի մը քով աշա-

կերտութեան մտնել, ուստի անոնք իրարմէ բաժնուեցան՝ Բարիզի նման մեծ քաղաքի մը մէջ: Ամէն մէկը իր յարմար դատած կողմը գնաց, ինչու որ ամէն մէկուն սորվելիք արհեստները տարբեր էին:

Շատ տարիներ անցան առանց իրար տեսնելու: Այն ատեն այս չորս պատանիները երիտասարդներ եղած էին, արհեստաւորի աշակերտները՝ գործաւորներ:

Առտու մը Պետրոս որ հիւսն էր, ու տունի մը մէջ շինութեան կ'աշխատէր: Եւ մինչդեռ լինցունելու վրայ էր այն խոշոր գերանները՝ զոր պիտի ղետեղէին սանիքին վրայ, ուրախութեամբ կ'երգէր, երբ կը տեսնէր որ շատ յառաջ կ'երթար գործը:

Պետրոսի զլխուն վերեւ՝ թիթեղագործ մը՝ կ'սկսէր տունին ծածքին վրայ զինկէ բարակ թերթերը իրարու գամել: Վերջապէս Պետրոսի աչքերուն տակ խարտեաշ մագերով ներկարարի մը գլուխը կը տեսնուէր որ իր վրձինովը պարտէզին վանդակորմը կը ներկէր, եւ կարգաւ երկաթէ ձողիկներուն թեւերը կը ներկէր:

Ու այս երեք գործաւորներուն դեռ նոր սկսած էր մօրուքը իրենց կզակը ծածկել: Անոնք այնչափ գործունէութեամբ կ'աշխատէին բոլորովին իրենց գործին դադարած որ ուշադրութեամբ իրարու երես նայելու ժամանակ չունէին:

Երբ իրիկուն եղաւ, անոնք իրարու հանգիւցեցան դրան առջեւ. հետզհետէ աւելի ուշադրութեամբ սկսան իրարու նայիլ: Պետրոս յանկարծ ձայն մը ձգեց ու թեւերը բանալով դէպ ի իր ընկերներուն՝ Անտօնի ու Պօղոսի մօտեցաւ եւ զանոնք կատարելապէս ճանչցաւ:

— Այսպէ՛ս, ըսաւ Պետրոս յուզեալ ձայնով մը, ահաւասիկ նորէն երկինք մեզի միացուց: Երբ տղայ էինք դպրոցին մէջ աշխատութիւնը ամէն օր մեզի կը միացնէր, ու հիմա նորէն իրարու մօտ ենք, այսուհետեւ ոչ եւս իրարմէ բաժնուինք. միանք միշտ անբաժան բարեկամներ, ուրեմն այս բարեկամութեան սկիզբ մը ընելու համար, երթանք միատեղ ճաշենք՝ եթէ կ'ուզէք:

Մի եւ նոյն խօսքերը կրկնեցին միւս երկուքը, Պետրոսի ձայնակցելով. « Միշտ բարեկամ մնանք »:

Յետոյ ճամբանին շարունակեցին դէպ ի

գործաւորներու համար հաստատուած ճաշարան մը, ուր մարդ մը երեք դահեկանով կրնայ ճաշել, խիստ գոհ մնալու չափ: Հիւսնը կը տանէր իր սղոցն ու քերիչը, ներկարարը իր ներկի ամանը, թիթեղագործը զըւարթութեամբ կը գլխորէր հիմա իր պարագա սայլակը քարայտակին վրայ:

Անոնք բոլոր ճամբան անցեալին, դըպրոցին ու իրենց ընկերներուն վրայ կը խօսակցէին:

Գիշերը վրայ կը հասնէր եւ արդէն մութը կոխած էր փողոցին մէջ. նոյն միջոցին մարդ մը տեսան որ ծանր սնտուկի մը տակ մեջքը ծռած կուգար: Այս մարդը ծանր ծանր շիտակ իր առջեւ նայելով կը քաշէր, առանց աջ ու ձախ նայելու: Բայց երբ երեք ընկերներուն մօտեցաւ, Պետրոս զանի ճանչցաւ:

— Սիմօնն է այն, պօռաց, ու երեքը միասին շրջապատեցին, կրկնելով, « Այո՛, Սիմօնն է »:

Սիմօն կտնդ առաւ, և փոխադարձաբար երիտասարդներուն վրայ յառելով աչքերը՝ ինքն ալ զանոնք ճանչցաւ:

Բայց ան չէր կրնար անոնց ձեռքը սեղմել. դէպ ի ետ ետ պատին երթալով սընտուկին մէկ ծայրը պատուհանի մը կռթընցուց, ու այն ատեն աւելի դիւրութեամբ գլուխը դէպ ի վաղեմի ընկերներուն դարձուց:

— Ա՛հ, Սիմօն, դու ուրեմն բեռնակիր Կղե՞ր ես, տաժանելի արհեստ մըն է այդ, ըսին ընկերները:

— Ես իմ արհեստէս գանգատ չպիտի ընէի եթէ բաւական վաստկէի և աւելի ուժեղ լինէի, բայց դուք գիտէք թէ ես ձեր ամէնէն տկարն եմ:

— Բայց այն ատեն, ըսաւ Պետրոս, ինչո՞ւ ուրիշ գործ մը չես ընել:

Սիմօն տխրութեամբ ժպտեցաւ: — Ա՛հ, բարեկամներս, երեսագործութիւն ուղեցի սորվիլ. բայց ես հազիւ քիչ մը կարգալ գիտեմ ու բնաւ որ եւ իցէ բան գծագրել չեմ գիտեր. միանգամայն ծոյլ էի. ուստի երեսագործ վարպետս զիս ճամբեց, ես ալ փողոցները պտտելով բեռնակիր եղայ, սակայն ամենեւին տոկուն բեռնակիր մը՝ ըլլալու յարմարութիւն չունիմ: Ասոր վրայ Սիմօն գլուխը շարժելով սկսաւ նորէն պատրաս-

տուիլ իր ծանր սնտուկը շալկելու :

Այս միջոցին իր երեք ընկերները յառաջ անցան :

— Սպասէ՛, պօռաքին, կ'ուզենք քեզի օգնել :

Երեք երիտասարդներն սնտուկին մէջ մէկ ծայրէն բռնեցին, եւ փոխանակ Սիմօնին կռնակը բեռնեցին : Իրենց ուսերուն վրայ տռին : Անտօն նշմարով մը ցուցուց իր պարապ սայլակն, ակնթարթի մը մէջ սընտուկը տեղաւորուած էր սայլակին մէջ, որ քարայրատակին վրայ գլորելով կը յառաջանար :

— Այս գիշեր, ըսաւ Պետրոս Սիմօնի, պիտի հանգստանաս եւ մեզի հետ պիտի ճաշես, եւ պիտի խօսինք քու վիճակիդ բարելաւութեան վրայ :

Սիմօն անոնց դէմ չէր դնէր. ուրախ էր իր վաղեմի ու եղբօր պէս իրարմէ սիրուած ընկերներու պատահելուն համար, բայց մի եւ նոյն ատեն շատ տխուր էր, երբ կը խորհէր այն մեծ տարբերութեան վրայ՝ զոր ընկերական դիրքը չարդէն դրած էր իր ու անոնց մէջ տեղ, ինչպէս երբոր դպրոցին մէջ ամենէն յետինն եղած էր, հիմա ալ կեանքի ասպարէզին մէջ ամենէն դժբաղդն եղած էր :

Երբոր չորս վաղեմի ընկերները հաւաքուած էին ճաշասեղանին բոլորտիքը, Պետրոս սկսաւ խօսիլ :

— Մտիկ ըրէ՛, Սիմօն, ըսաւ, ամէն գործաւոր եղբայր են իրարու, մանաւանդ մենք՝ որ տղայութենէ ի վեր զիրար կը ճանչնանք. դու այժմ լաւ վիճակի մէջ չես, պէտք է մենք զքեզ անկէ ազատենք, բայց նախ պիտի ընես դու անձամբ ասոր համար ինչ որ կարելի է. դուն միթէ ունի՞ս հաստատ կամք՝ աշխատելու ու չգիտցածդ սորվելու :

— Այո՛, պատասխանեց Սիմօն, դժբաղդութիւնը լաւ դասատու մըն է՝ գէթ անոնց համար որ ազնիւ սիրտ մը ունին, եւ մի միայն թշուառութիւնն է որ աշխատիլ կը սորվեցնէ մարդուս :

Երբ Սիմօն կը խօսէր այսպէս, աշխատութենէ ու տառապանքէ մարած աչքերը կրակի պէս կը փայլէին :

— Է՛հ, լաւ ըսաւ Պետրոս, կը ճանչնամ աթոռ շինող վարպետ մը որ գործաւորի մը

պէտք ունի, եթէ կ'ուզես հիմա քեզի անոր քով կը տանիմ. նաև իրեկունները պիտի տանիմ չափահասներու դպրոցը, ուր պիտի սորվիս դու գրել ու հաշուել, վասն զի կենաց ասպարէզին մէջ լաւ մը չգիտնալը աղէկ չէ. այսպէս դուն պիտի սորվիս գծագրութիւնը՝ որ ընդհանրապէս քու արհեստիդ համար շատ կարեւոր է, ու երբ մէկը կ'ուզէ լաւ գործաւոր մը ըլլալ, իմացա՞ր ըսածներս :

Սիմօն, փոխանակ պատասխանելու, յուզեալ դէմքով մը ձեռքը Պետրոսի երկնցուց. ու իր երեք ընկերները երջանկութիւն մը կ'ըզային իրենց սրտին մէջ, տեսնելով որ այնչափ լաւ կերպով աւարտեցաւ այն օրը :

Երկու օր վերջ, Սիմօն քաջասրտութեամբ կ'աշխատէր իր նոր վարպետին քով, թէեւ ատեն ատեն իր հին ծուլութեան կամեցումն անց ենթակայ կ'ըլլար. սակայն երեք ընկերները անոր վրայ կը հսկէին : Անոնք այնչափ հոգածութեամբ աշխատեցան որ Սիմօն լաւ գործաւոր մը եղաւ, ու միանգամայն կրթեալ գործաւոր մը :

Քանի մը տարի ետքը ամուսնացաւ ու զաւակներու հայր եղաւ. Երբ կը տեսնէր իր զաւակներուն դպրոց երթալը՝ կ'ըսէր անոնց. « Աշխատեցէ՛ք, այսօրուան սորվիլ չուզածնիդ պիտի ստիպուիք ապագային մեծ դժուարութեամբ սորվիլ : »

Բարոյական. — Երբոր դպրոցին մէջ ժամանակիդ յարգը կը ճանչնաս, կենացդ թըշուառութեան օրերը կը նուազեցնես :

Իզմիր

Թարգմ.

ԻՐՄԱ ՄՍԵՐԵԱՆ

Ե Ր Ե Ի Ա Կ

Ե Ր Ե Ի Ա Կ Ի Օ Ղ Ա Կ Ն Ե Ր Ը


Նախնիք եօթը մոլորակ միայն կը հաշուէին, առանց Երկիրս ալ մէջ խառնելու, որ՝ ըստ իրենց, տիեզերքի կեդրոնը անշարժ կը կենար. ասոր փոխարէն Լուսինն ու Արեւն իբր մոլորակ կ'ընդունէին : Մոլորակ (Թափառիկ մարմին) բառին ստուգաբանութեանը նայելով, հին աստղաբաշխ-

ները իրաւունք ունէին . որովհետեւ իրենց ճանչցած երկնային բոլոր աշխարհներէն, այս եօթը հատը միայն շարժուն կ'երեւային իրենց, մինչդեռ միւսները գամուած կը մընային լուսազարդ կոմարին վրայ : Այս սըխալը Կոպերնիկոսի գտած բուն երկնային դրութեան գիտովը միայն ուղղուեցաւ, որով մոլորակներու կարգէն դուրս բրին Արեգակն ու անոր տեղ դրին Երկիրը . նոյնպէս մեզի ետ դարձուցին մէր հաւատարիմ արբանեակը՝ Լուսինը :

Հին ու նոր աստղաբաշխները՝ մինչեւ Կալիլէոս, բան մը չէին կրնար գիտնալ այս մոլորակներուն ձեւին ու կազմութեան վերայ, այլ միայն կը բաւականանային անոնց շարժումներն արձանագրելով : Այն վայրկեանին՝ ուր Ֆլանտրայի գիտունը՝ հեռա-

ցումէն շատ մեծ եղաւ : Տեսաւ որ այս մոլորակը երեք լուսաւորներէ կը բաղկանայ, մին՝ ամէնէն մեծը՝ որ կեդրոնը կը գտնուի, իսկ միւս երկուքը շատ աւելի փոքր, որոնք առաջինին երկու կողմերը կեցած էին եւ ըստ երեւոյթին անշարժ էին : Ահա՛ թէ ի՞նչպէս Կալիլէոս կը պատմէ այս դէպքը, 1610 Նոյեմբեր 13ի մէկ նամակին մէջ :

« Մեծ վարմանքով դիտեցի թէ՛ Երեւակը միակ գունտէ մը չի բաղկանար, հապա երեք հատէ, որոնք գրեթէ իրարու կը դպչին եւ իրարու նկատմամբ անշարժ են. մէջտեղինը՝ երկու քովիներէն խիստ շատ մեծ է : Ասոնք մէկ գծի վրայ կը գտնուին՝ մին արեւելքի կողմը, իսկ միւսը արեւմուտքի : Սոյն գիծը Զոդիակոսի գօտիին զուգահեռական չէ . այլ արեւմուտքի կողմը քիչ



դիտակն հնարեց, մոլորակային դրութիւնը ահագին փոփոխութիւն մը ունեցաւ . այն ատեն հասկցան թէ միւս բոլոր մոլորակներն ալ Արեգակին, Լուսինն ու Երկիրն պէս գընտաճեւ լուսաւորներ են, հետզհետէ տեսան Արուսեակի, Փայլածուի փոփոխութիւնները, Հրատի փիծերը, Լուսնթագի վրայ գտնուած մութ գօտիները : Այս վերջինը սցուց նաեւ իր չորս մոլորակները՝ որոնք ինչպէս Լուսինը Երկիրն շուրջը՝ նոյնպէս ալ իրենք Լուսնթագի բոլորտիքը կը թափառէին, Արեգակնային դրութեան մէկ մանրանկարը ձեւացընելով :

Բայց երբ Կալիլէոս իր դիտակը, որ առարկաներն, 32 անգամ կը մեծցնէր, ուղղեց Երեւակի վրայ, իր զարմացումը սքանչա-


մը հիւսիս կը նայի : Պզտիկ դիտակով մը եթէ նայինք՝ Երեւակ մէկ հատ միայն կ'երեւայ ձիթապտուղի պէս երկնցած . իսկ եթէ մարմինի մը մակերեւոյթը հազար անգամ մեծցնող (տրամագիծը 32 անգամ մեծցնող) դիտակով մը նայինք, երեք զատ զատ գունտեր կը տեսնենք որոնք մութ գիծով մը իրարմէ զատուած են » :

Ամիս մը ետքը Կալիլէոս դիտեց որ իր Յուլիսի մէջ տեսած այդ երկու պզտիկ գունտերը երթալով կը պզտիկնան, մինչեւ 1612 Նոյեմբերի մէջ, որ բոլորովին անհետացան . մոլորակը պարզ գունտ մը միայն մնացեր էր՝ նման միւս մոլորակներուն : Այս փոփոխութիւնները ա՛լ աւելի Կալիլէոսի մտատանջութիւնը աւելցուցին :

Ժամանակ անցնելէ վերջ, մի եւ նոյն երեւոյթները կրկին կրկնուեցան ու աստեղաբաշխներուն ուշադրութեան առարկայ դարձան: Քառանտի, Հէվելիուս մտատանջ կը հետեւէին այս փոփոխութիւններուն՝ կալիլէոսէ աւելի բան մը չհասկնալով, որովհետեւ այն աստեղները դեռ դիտակները կատարելագործուած չէին և առարկաներուն բուն պատկերը չէին կրնար տալ:

Հէվելիուս (1647 ին) երկու պզտիկ գունդերը մեծին կառչած կը տեսնէր, եւ բացէ ի բաց կը խոստովանէր թէ բան մըն ալ չի հասկնար: Ինը տարի ետքը՝ մինչեւ վեց տեսակ փոփոխութիւն հաշուեց. ի վերջոյ իր իսկ ձեռքով շինած մէկ հեռագիտակը

դիրքերուն համեմատ, Երկրագնդին վրայ կեցող մը շարունակարար կը տեսնէ օղակին երկու երեսներն ալ Արեւէն լուսաւորուած: Նոյնպէս, բէրսէքթիվի սլարզ երեւոյթով մը այս օղակը հաւթածեւ կամ երկար թերաւորի մը ձեւ կ'առնէ: Սոյն կոր գիծը խիստ բարակ կ'երեւնայ երբ մեր աչքէն մեկնող լոյսի ճառագայթները գրեթէ զուգահեռական կ'ըլլան անոր մակարդակին, յետոյ կամաց կամաց կը լայննայ մինչեւ որ իր առաւելագոյն կէտին հասնի, այն ատեն Երեւակ բոլորովին չըջապատուած կ'երեւի օղակին վերի ու վարի երկու եզերքներով՝ որոնց մին հիւսիսային, իսկ միւսը հարաւային կիսագունտերը կը ծածկեն:



գործածելով հանելուկին առաջին բառը լուծեց: Տեսաւ որ Երեւակ չըջապատուած էր անթափանց գօտիով մը, որ բնաւ գունտին չէր դպէր, և մոլորակին կը հետեւէր անոր արեգակին շուրջը ըրած շարժման մէջ, ու իր մակարդակը որ միշտ ինքնիրեն զուգահեռական կը մնար՝ երկրիս գծած ճամբուն մակարդակին հետ 30 աստիճանի անկիւն մը կը ձեւացնէր:

Երբ այս դրութիւնը աչքի առջեւ ունենանք, շատ դիւրաւ կրնանք բացատրել հին աստեղագէտներուն դիտած զանազան երեւոյթները: Արդարեւ, Երկրի՝ Երեւակին ու Արեգակին իրարու նկատմամբ բռնած

Երբ օղակին մակարդակը Արեգակէն կ'անցնի, ինչ որ մէկ շրջանին մէջ երկու անգամ կը պատահի, Արեւուն ճառագայթները կը քերեն կ'անցնին առանց լուսաւորելու օղակը, այն ատեն մոլորակը միայն կ'երեւի, առանց քովը յաւելուածի: Այսօր մոլորակին միեւնոյն վիճակին մէջ գտնուած ատեն, երբ զօրաւոր հեռագիտակով մը նայինք, լուսաւոր դիմ մը կը տեսնենք, որ կը կտրէ կ'անցնի Երեւակի գունտը, այդ է իր օղակը. իսկ գունտին մէջ կը նշմարուի մութ խիստ բարակ գօտի մը, այս ալ օղակին ձեւած շուքն է: Եթէ երկրիս վրայէն այս բաները կը տեսնուին, պատճառը սա է որ,

Ներկայագույնը, Արեւն ու օդակը միացնող մակարդակին վրայ չգտնուիր, որով կարելի կ'ըլլայ մեզի քիչ մը վերէն կամ վարէն դիտել օդակն ու իր շուքը:

Ասանկ զարմանալի յօրինուածք մը ի հարկէ գիտուններուն հետաքրքրութիւնը պիտի չարժէր. բոլոր աստեղագէտները եւ ռանդոլֆ գործի սկսան հասկնալու համար թէ ինչպէ՞ս գունտի մը չդպչող և նիւթէ կազմուած օդակ մը կրնայ գոյութիւն ունենալ. ի՞նչպէս կ'ըլլայ որ ասանկ ահագին ծանրութիւն մը վար չիյնար. օդակն ալ կը դառնայ թէ ոչ անշարժ է. հեղուկ, հաստատուն թէ կազային մարմիններէ կը բաղկանայ: Այս հարցումներուն պատասխանելէ առաջ, քանի մը կատարուած դիտողութիւններ յիշատակենք, որոնք իբր հիմ պիտի ծառայեն մեզի, որչափ որ կարելի է պարզելու Երեւակի աշխարհը չըջապատող գաղտնիքը:


Նախ ըսենք թէ Երեւակի օդակը մէկ հատ մը չէ. Քասինի առաջին անգամ նըշմարեց որ մութ գիծ մը օդակը երկու մասերու կը բաժնէ որոնք տնհաւասար կերպով լուսաւորուած են, ու մին մեծ՝ միւսը փոքր է: Ամէնէն մեծն ու փայլունը մէջի կողմը կը գտնուի, իսկ միւսը դուրսի կողմը: Այսօր դիտուած է որ դուրսի օդակը չորս զատ մասերէ կը բաղկանայ, իսկ ներքին օդակը կը պարունակէ մաս մը որ թափանցիկ է և իր մէջէն կը ցուցնէ Երեւակի գունտին մէկ մասը:

Այս օդակներուն մեծութիւնը չափած են: Ամէնէն դուրսի օդակին տրամագիծը, այսինքն բոլոր դրութեան մեծութիւնն է 200 հազար քիլոմէթր, իսկ լայնութիւնն է 16 հազար քիլոմէթր, թանձրութիւնը շատ քիչ ըլլալուն կարելի չէ եղած ճշգիւ հաշուել: Վ. Հէրշել 2000 քիլոմէթր գտած էր. իսկ այսօր Ամերիկացի մը՝ Պօնտ աստղաբաշխը կ'ըսէ թէ 300 քիլոմէթրը չանցնիր:

Այս չափերը որչափ որ ալ ճիշդ են, բան մը չեն ըսեր մեզի թէ այդ դրութիւնը ինչէ՞ կազմուած է: Հետաքրքրաշարժ կէտերէն մէկն ալ սա է թէ այդ օդակները ի՞նչ շարժում ունին, ինչու որ առանց թաւալումի կարելի չէ որ անհաւասար մեծութեամբ այդ ձեւով մարմիններ հաւասարակշռութեան մէջ մնան: Վ. Հէրշել հաշուած է թէ

օդակները 10 ժամ 32 վայրկեանէն իրենք իրենց վրայ կը դառնան, այսինքն, 2 - 3 վայրկեանի տարբերութեամբ՝ միեւնոյն ժամանակին մէջ որով գունտն ալ ինքն իր վրայ կը դառնայ:

ՋԱՐԷՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԵՐԿՐԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒՄԸ

(Շարունակութ. 14րդ քիւնէն)

Ալիմիսթիք ԲՈՎՆԵՐԻ

Գտած են զանի:

1900ին Բարիդի Տիեզերական Արուեստահանդէսին լռին մէկ ծառուղին, մեքենաներու թանգարանին վիթխարի շէնքով ծածկուած, և ժողովուրդին անծանօթ տաղուար մը կայ, որ չի նուած է հեռուն, շատ հեռուն Շան տը Մարտի ծայրը: Հոն այցելող ցանցաւ օտարականները խորհրդաւոր և գրեթէ ծածկագիտական բաներ կը տեսնեն միայն, Հոն կը դտնուին ապակիէ խողովակներ՝ լեցուած գոյնզգոյն փոշիներով, որոնք մեծ մասամբ գորշ և սև են. և երբեմն ալ կապոյտ կամ բոցանշոյլ կանանչ. աւելի հեռուն կը գտնուին նախապատմական պղախի խեփոյններ, սպիտակ գոյացութեան մը մէջ կաղնապարուած ձուկի ատամներ և ետքը, կրացած ոսկրատինքր, հըսկայ կենդանիներու կմախքներ, վերջապէս, երկաթի պէս կարծր և ածուխի նման սև ասորօրինակ ժայռերու զանգուածներ. և այս ժայռերու մէկ բուրգին վրայ՝ երկու արձաններ, մ'կը դարբինի մը և միւսը հնձողի մը, որոնք ձեռք ձեռքի տուած են, և աւենուրեք մինչև բուրգին կատարը, կան խորհրդաւոր երկայն խողովակներ՝ լեցուած զանազան տեսակ և բարկապաշտութեամբ մը հաւաքուած փոշիներով, կարծես թէ ոսկեփոխը (alchimiste) յանկարծ ներս պիտի մտնէ և քանի մը մոզական նշաններով ամէնն ալ ոսկի պիտի փոխէ: Քիմիական պարարտութիւններու տաղաւարն է սա:

Այցելուն՝ որ վայրիկ մը ոսկեփոխութեան պիտի հաւատայ, կէս մը բախ-

ուած պիտի ըլլայ: Եւ արդարեւ, այս ամէնը պիտի փոխուին ոսկիի, ոսկիէն ալ աղէկ բանի մը, կեանքի, հանքային, բուսային եւ մարդկային կեանքի: Այս նիւթերը որ ըստ երեւոյթին այնչափ անփայլ, այնչափ պաղ եւ այնչափ փտած են, կը պարունակեն նիւթ մը որ տարածուելով հողին մէջ, պիտի աճեցնէ բոյսերը, պիտի զօրացնէ մարդիկը եւ անոնց պիտի տայ առողջութեան վարդ գոյները: Եթէ մեքենաներու թանգարանը՝ որու ոտքին տակն է այս խոնարհ տաղաւարը, լեցուած է երկրագունտիս ամէն կողմերէն եկած ցորենի ուրաներով, ամէն տեսակ գինիներով եւ սընդատու բերքերով, պատճառն այն է որ հոս հաւաքուած փոշիները իրենց գերը կատարած են: Աւանց այս փոշիներուն, որոնց ոչ ոք կարեւորութիւն կուտայ, Արուեստահանդէսը չպիտի կրնար աչքի առջեւ պարզել ո՛չ իր երկրագործական ճոխութիւնը եւ ո՛չ ալ հետեւապէս, (որովհետեւ սննդառութիւնը ամէն ջանքերու խարխիսն է), իր անսահման ճարտարարուեստութեան զարմանահրաշ պերճութիւնը: Այս փոքրիկ, լոռն եւ անչէն տաղաւարէն կը մեկնի գորութիւն մը որ կ'երիտասարդացնէ աշխարհը՝ Բիմիական պարարտութիւնն է ան:

Յիրաւի, բոլոր այս փոշիներն ու ժայռերը պարարտութիւններ են: Ասոնք անթերի պարարտութիւններ չեն աղբիւսի պէս, որ ընդհանուր առումով ամէն բանի կը յարմարի, բայց մասնաւոր առումով բանի մը չի յարմարիր: Ասոնք իրարմէ չատ տարբեր կազդուրիչներ են որոնց իւրաքանչիւրը հողին մասնաւոր սնունդ մը կուտայ: Այսպէս երբ հողը ֆոսֆորական թթու չունի՝ բոլոր այս ֆոսֆատները զանի պիտի տան, առանց հողը խափանելու անօգուտ բորակածինով մը: Եթէ բորակածինն է որ կը պակսի, նիքրաս քր սուսերը պիտի տան զանի, առանց տալու ֆոսֆորական թթու կամ մանաւանդ կիր որմէ բաւականաչափ ունի: Եթէ փոթասն է որ բոյսերը ամէնէն աւելի սպառած են՝ քայնիքը պիտի պայն: Գալով կիրին, գաճէ (ալչը) զատ կիրի ֆոսֆատները պիտի մատակարարեն զանի միեւնոյն ատեն նաեւ ֆոսֆորական թթուն: Այսպէս, քիմիական պարարտութիւնը կը պարգեւէ հողին

ճիշդ ինչ բան որ կը պակսի իրմէն: Ուստի տարանին չորս պաշարները՝ բորակածինը, ֆոսֆորական թթուն, փոթասն եւ կիրը կը հայթայթուին հետեւեալ չորս հայթայթիչներով, որոնք են, նիթրատ, ֆոսֆատ, քայնիթ եւ կիր:

Անպիսան նիւթեր կը պարունակէին անծանօթ գանձեր

Երեկ չէ որ կիրին օգտակար ըլլալը հասկըցան մարդիկ, թէ՛ մարմնային (կաւային հող) ձեւին տակ եւ թէ՛ գաճի ժՁ. դարու հռչակաւոր ֆարսեւտագէտ մը, Պէրնար Փալիսի, գովութեամբ հաշակեց մարմնային գործածութիւնը իբրեւ պարարտութիւն հողին համար, եւ այսպէս, իր ըզճական տեսութիւններով արժանի է արդի հողագիտութեան նախակարապետը կոչուելու:

Աւելի ետքը, ԺԸ. դարուն մէջ, գտան որ գաճով կարելի է կրկնապատկել առուոյտի հունձքը: Այս ճշմարտութիւնը հաստատեցին առուոյտի արտի մը վրան գաճ ցանելով այնպէս մը՝ որ խոլոր գիրերով այս բառերը կազմուեցան. Ասոր մէջ գան խառնուած է: Հունձքի ժամանակ, խոտը այնչափ խիտ բուսած էր այն տեղը որ, բառերը ընթեռնելի կերպով կը տեսնուէին, Բայց եթէ ըսուի թէ կիրին գործածութիւնը ծանօթ էր մեր հայրերուն՝ չենք կրնար նոյնը ըսել միւս գոյացութիւններուն համար ալ, որոնք բուսային կեանքի տարրեր կը պարունակեն:

Ո՞րակից յառաջ կուգան միւս քիմիական պարարտութիւնները: Ժամանակաւ անարգուած, իբրեւ անպետ նետուած եւ իրենց տիրոջ կողմէն զգուանքով դիտուած կարգ մը նիւթերէ: Այսպէս է ոսկրածուխը (noir animal): Երբ ոսկորները կրացնենք փուռի մէջ լաւ մը գոցուած ու օդ չանցած ամանի մը մէջ, կ'ունենանք սեւ նիւթ մը, որ կենդանիներու ոսկրէն գոյացած ըլլալուն համար կը կոչուի ոսկրածուխ, Այս ոսկրածուխը հետաքրքրաշարժ յատկութիւն մը ունի. կը ծառայէ ճակնդեղի քամուքը ճերմկցնելու, գտելու եւ դուռնաւորելու, եւ ասոր համար կը գործածուի չաքարաչինութեան մէջ: Միայն թէ երբ այս գոյացութիւնը գործած-

ուէր այս կերպով եւ ան կորսնցներ իր գումարտիչ յատկութիւնները, զանի կը նետէին գործարաններու դուռերուն առջեւ: Օր մը, անկէ օձիքնին աւելի լաւ ազատելու համար զանի թափեցին մօտակայ արտերուն վրայ: Այդ այդ մնացորդները կիրի ֆօսֆօրներէն էին, եւ այն արտը որու վրայ թափած էին զանոնք՝ ճիշդ ֆօսֆօրական թթուի կարօտութիւն ունէր: Այս պատահաբար ինկած մանանային ներքեւ արտը զարգացաւ ու առատ հունձքով ծածկուեցաւ: Պ. Գուլթօ Թան լրագրին մէջ պատմած է այս դաշտին յարավէպներէն մէկը: Նանթի հարուստ շաքարի գտիչ մը, Պ. Ստեփան, կը պատուիրէ օր մը իր ագարակապաններէն մէկուն, Մաթիւրէնի, իր արտերուն վրայ թափել զտուփներէն գոյացած ոսկրածուխը:

« Ութ ամիս ետքը, Վիժանի տանավաճառը երթալու համար Մաթիւրէնէ անցնող մարդիկ խիստ զարմացան. երբ, այն ժամանակ հէքթարը հազիւ 200 ֆրանք արժող գետինի մը վրայ տեսան, փոխանակ բազմադարեան մացառափուշերուն, առատ ու լաւ հունձքեր որոնք գէթ կը հաւասարէին, եթէ չէին գերազանցեր իսկ, Ֆրանսայի ամէնէն արգասաբեր գաւառներուն հունձքին:

« Ասիկա խօսակցութեան նիւթ մը եղաւ: Վիժանի տօնավաճառին մէջ ուրիշ բանի վրայ չխօսուեցաւ:

« — Տեսած էք Մաթիւրէնի կաղամբներն ու կանճրակները:

« — Հապա հաճարե՞րը:

« — Իսկ վարսակները:

« Եւ Մաթիւրէնի շուրջը կը խռնուէին, որ իր տիրոջմէն հրահանգներ առած ըլլալով՝ կրնար ճշդութեամբ պատասխանել ուրիշ ագարակատէրներու կողմէ իրեն եղած հարցումներուն:

« — Ի՞նչ դերը քու մացառափուշերուդ վրայ այդչափ ընտիր կաղամբ բուսցնելու համար:

« — Ո՛հ, տէր իմ, շատ մեծ բան մը չէ. պարզապէս քիչ մը սեւ փոշի, զոր տէրս շրկած է ինձի:

« — Հապա կանճրակի՞դ համար:

« — Միշտ միեւնոյն սեւ փոշին:

« — Իսկ հաճարի՞դ համար, վարսակի՞դ համար:

« — Միշտ միեւնոյն սեւ փոշին:

« — Բայց որչափ պէտք է այդ սեւ փոշիէդ:

« — Ո՛հ, ոչ շատ, գրիւ մը ցորեն ցանելու չափ հողին համար 100 լիպրա:

« — Այդչափ տեղ կը պարունակէ 10 ար կամ կալ (100 քառ. մէթր). ուստի մէկ հէքթար հողի համար պէտք է 1000 լիպրա կամ 500 քիլօկրամ:

« — Կարելի՞ է միթէ ունենալ այդ սեւ փոշիէդ:

« — Ո՛րչափ որ ուզէք, բաւական է որ տիրոջմէն ուզեք:

« — Ի՞նչ է գինը:

« — Հակը 16 ֆր. որ կը կշռէ 200 լիպրա եւ ան ալ կը բաւէ 2 գրուաչափ (2 գրը իւր ցորեն ցանելու տիղ) հողի:

« Հարկ չկայ ըսիլ որ, հետեւեալ տարին Մաթիւրէնի բոլոր դրացիները մշակեցին մացառափուշերը՝ փորձելու համար այդ սեւ փոշին, որ բնականաբար միեւնոյն հրաշալի արդիւնքը տուաւ »:

Այսպէս է ոսկրածուխ կոչուած ֆօսֆատի պարարտութեան ծագումը:

Թարգ.

ԳԱՌՆԻԿ Դ. ՄԵՍՐՈՊԵԱՆ



Դ. Ի Տ Ա. Կ Ա. Ն. Վ. Է. Պ.

Փ Ի Ի Լ Վ Ե Ր Ն

ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

— — —

(Շարունակութիւն 14րդ թիւէն)

ԺԸ.

Առտուան տասներկուքին արեւու ճառագայթ մը վրանիս ինկաւ ու մեզի արթնցուց: Պատերուն լավայէ հազարումէկ երեսիկները ցոլացուցին զայն ու կայծերու անձրեւի մը պէս չորս դին սփռեցին: Շրջակայ առարկաները տեսնելու չափ լոյս կ'ընէր:

— Նայի՛նք, Աքսէ՛լ, ըսաւ հօրեղբայրս ձեռքերը մէկմէկ շփելով, մեր Բրօնիկը՝

կրասի տան մէջ ասանկ աղւոր գիշեր մը անցուցած ունէի՞ր։ Ո՛չ կառքի աղմուկ, ո՛չ խանութպանի պողտուք։

— Անշուշտ, այս հորին յատակը հանգիստ ենք, բայց այս հանգարտութիւնը սարսափեցուցիչ բան մը ունի,

— Դո՛ւն ալ, գոչեց հօրեղբայրս, եթէ հիմակուրնէ սոսկաս, վերջը ի՞նչ պիտի ընես։

76. միլիմէդրի մօտերը կը հասնէր։

— Կը տեսնե՞ս յարեց հօրեղբայրս, քիչ ատենէն ա՛լ ծանրաչափը անօգուտ կը դառնայ, և աեղը անգայտաչափը կ'անցնի։

— Բայց, ըսի, մթնշուղտին յարաճուն ճնշումը մեզի չնեղե՞ր։

— Ո՛չ, կամաց կամաց իջնելով պիտի վարժուինք։ Բայց հիմա, ժամանակ չկորսն-



Դեռ մատնաչափ երկրիս կեղեւին մէջը չենք յառաջացած։

— Ի՞նչպէս։

— Այսինքն գրեթէ կղզիին մակերեսէն թիւն վրայ կը գտնուինք. այս ուղղաձիգ երկար խողովակը գրեթէ ծովուն մակերեսէն թիւն բարձրութեանը կ'անգ կ'աւանտէ։

— Վստա՞հ էք ատոր։

— Հապա՛, տես ծանրաչափը։

Արդարեւ, սնդիկը, որ իջած ժամանակնիս կամաց կամաց բարձրացեր էր, հիմա

ցնենք, ո՞ւր է վար գլորած ծրարնիս։

Հանս իր որսորդի սուր աչքերով անգամ մը չորագին նայեցաւ.

— Պէր հըբ, ըսաւ։

— Վերն է։

Ծրարը, գետնէն հարկը ոտքի չափ բարձր, ժայռի մը ծայրին կառչած էր։ Ծաւոնկ իսլանտացիին կատուի մը պէս հոն մագլցեցաւ, քանի մը վայրկեան ետքը ծրարնուս տէր եղած էինք։

— Հիմա՛, ըսաւ հօրեղբայրս, ճաչենք,

բայց երկար ճամբայ քաղովի մը պէս ուտենք:

Նախաճաշէն ետքը, դասախօսը գրպանէն տետրակի մը հանեց, յատուկ ծանօթագրութիւններու համար եւ զանազան գործիքները նայելով՝ նշանակեց:

Երկուշաբթի, 1 Յուլիս
Քրօնօմէթը. — ասուան ժամ 12, վաշիկ 17
Ծանրաչափ. — 29 մատ 7 գիծ
Ջերմաչափ. — 6⁰
Ուղղութիւն. — Արեւելք-Հիւս-Արեւելք

Այս վերջին ծանօթագրութիւնը՝ առջի իրիկուան հօրեղբորս նշմարած մութ ճամբուն ուղղութիւնը կը ցուցնէր:

— Հիմա՛, Աքսէլ, ըսաւ հօրեղբայրս, զուարթ ծայնով մը, հիմա պիտի երթանք երկրիս խորերը թաղուիլ: Բուն ճամբորդութիւնը հիմա է որ կ'սկսի:

Յետոյ վիզէն կախուած Ռամբօրֆի գործիքը, ձեռքը բռնած ելեքտրական լապտերին հետ հաղորդակցութեան պնդելով, զօրաւոր լոյս մը՝ գետնուղիին մթութիւնը ցրուեց: Հանս լապտերը առաւ:

— Ծամբայ ելէ՛ք, ըսաւ հօրեղբայրս:

Ամէն մէկերնիս՝ իրեն ծրարը առաւ: Հանս առջեւէն պիտի գլուխէր հագուստներու եւ շուաններու մեծ ծրարը: Այս խաւարտչին ճամբուն մէջ մանելէ առաջ վերջին անհարկ մը նետեցի, դէպ ի վեր, Իսլանտայի երկինքին վրայ, զոր այլ եւս պիտի չտեսնէի:

Վերջին, 1229ին բորբոքման միջոցին, լավան ճամբայ մը բացած էր այս գետնուղին. մէջ, եւ ամբողջ ներսիդին պատած պատած էր հաստ ու փայլուն խաւով մը որ ելեքտրական լոյսը ցրւացնելով, անոր դրութիւնը կ'աւելցնէր:

Ծամբուն ամէնէն մեծ դժուարութիւնը, գրեթէ 45 աստեղծանի զառիթափի մը վրայ շուտ շուտ չտահելու ջանքն էր: Բարեբաղ-դարար տեղ տեղ քանի մը ցցուածքներ, իրր աստիճան կը ծառայէին մեզ, ծրարնիս՝ չըլանով մը կապած ետեւնուս կը քաշէինք:

Ի՞նչ որ ոտքերնուս տակ աստիճան կ'ըսէինք, ճամբուն միւս պատերուն վրայ չըթափարէր էին: Լավային մէջէն մերթ ընդ մերթ պզտիկ ուռեցքներ դուրս կը ցցուէին քուարձի բերեղներ, ապակիի վճիտ բիւ-

թիլներով զարդարուած ձկուներ կը պճնէին ջահերու պէս եւ մեր անցած միջոցին կարծես թէ կը բռնկէին: Պիտի ըսէիր թէ, քարայրի սգին երկրիս վրայէն եկող հիւրերը ընդունելու համար կը լուսադարձէ իր ապարանքը:

— Ի՞նչ սքանչելի է, գոչեցի ակամայ, տեսէ՛ք, հօրեղբայր, տեսէ՛ք, ի՞նչ տեսարան: Սա լավային առած մութ կարմիր ու փայլուն դեղին գոյներուն նայեցէք, հապա այս բիւրեղները որոնք լուսաւոր գունդերու երեւոյթը ունին:

— Հա՛, հիմա հասկցա՞ր, Աքսէլ, սքանչելի են ասոնք, անանկ չէ՞, տղաս, կեցիր դեռ անանկ բաներ պիտի տեսնես որ. քալենք, քալենք:

Աւելի ճիշդը «սահինք» ըսելու էր, որովհետեւ ինքզինքնիս ձգած՝ դիւրաւ մը վար կը սահէինք: Երբեմն երբեմն կողմնացոյցին կը նայէի, բռնած ուղղութիւննիս միշտ հարաւարեւելք էր: Այս լաւայի անցքը ուղիղ գիծի մը թեքութիւնը ունէր ոչ մէկ կողմ, ոչ ալ միւսը կը ծռէր:

Չարմանալին սա էր թէ տաքութիւնը զգալի աստիճանով չէր բարձրանար: Երկու ժամ յառաջանալէ՝ ետքը՝ Ջերմաչափը 10 աստիճան կը ցուցնէր, այսինքն 4 աստիճանի յաւելում մը: Ասկէ կը հետեւցնէի թէ կտրած ճամբանիս աւելի հորիզոնական դիրքի մէջ եղած էր քան թէ ուղղահայեաց: Իջած խորութիւննիս հաշուելը դիւրին էր, որովհետեւ հօրեղբայրս հարկ եղած չափերը կ'առնէր, բայց արդիւնքը միայն իրեն պահելով կը բաւականանար:

Իրիկուան ժամը երկուքին ատենները զադարի նշան տուաւ. տեսակ մը քարայրի մէջ հասած էինք ուր օդը, զարմանալի բան, խիստ մաքուր էր, նոյն իսկ տեսակ մը զով օդի շարժում մը կը հասնէր մեզի. ի՞նչ էր ասոր պատճառը, մթնոլորտական ո՞ր երեւոյթէն յառաջ կուգար. չկրցի հասկնալ, ո՛չ ալ վիստակցի. անօթութիւնն ու յոգնութիւնը խորհելու անկարող կ'ընէին զիս. եօթը ժամ շարունակաբար վար լինելը դիւրին բան չէ: Բոլորովին ուժառայաւ եղած էի, երբ «զադար» բառը իմացայ, ճշմարիտ ուրախութիւն մը զգացի:

Հանս լավայէ սեղանի մը վրայ քիչ մը ուտելիք շարեց ու ախորժակով կերանք:

Ջուրի պակասութեան վրայ շատ մտադանջ էի. ունեցածնիս կէս մը սպառած էր. հօրեղբայրս ստորերկրեայ աղբիւրներ գտնել կը յուսար, սակայն դեռ հատ մը իսկ չէր հանդիպած. ուստի ուշադրութիւնը ասոր վրայ հրաւիրեցի:

— Ջուր չգտնելնիս կը զարմացնէ՞ք զի հարցուց:

— Անշուշտ, նոյն իսկ մեծ հոգի մէջ կը ձգէ ինծի. հինգ օրուան համար հազիւ կը բաւէ ունեցած ջուրերնիս:

— Մի՛ վախնար Աքսէլ, պիտի գտնանք, վստահ եղիր:

— Ե՞րբ պիտի գտնանք:

— Երբ որ այս լավաներէն անցնինք, ի՞նչպէս կ'ուզես որ ասանկ տեղէ աղբիւր մը ցայտէ:

— Բայց եթէ այս լավաները մինչեւ շատ խորերը իջնեն. կարճեմ թէ շատ ճամբայ մը չկտրեցինք ուղղահայեաց դիրքով:

— Ինչէ՞ն գիտես:

— Որովհետեւ, եթէ շատ յառաջացած ըլլայինք դէպի խորերը, տաքութիւնը պիտի շատնար:

— Քու գրութեանդ համեմատ, պատասխանեց հօրեղբայրս: Ձերմաշափը ի՞նչ կը ցուցնէ:

— Հազիւ 15 աստիճան. մեր մեկնելէն ի վեր ինը աստիճանի տարբերութիւն մը միայն:

— Լաւ ուրեմն, ի՞նչ կը հետեւցնես ասկէ:

— Ահա՛ թէ ի՞նչ կ'ըսեմ. դիտուած է որ քանի երկրիս մակերևոյթէն վար երթանք, ամէն 100 ոտք խորութեան ջերմաչափը մէկ աստիճան կը բարձրանայ: Բայց այս թիւը կը փոխուի մէկ քանի տեղական աղբեցութիւններու տակ: Ինչպէս Սիպերիոյ մէջ ջերմաչափին վրայ մէկ աստիճանի բարձրացում կ'ըլլայ ամէն 35 ոտքի. այս տարբերութիւնը բնական է կախում ունի ժայռերուն ջերմութեան հաղորդելիութենէն: Նոյնպէս մարած հրաբուխներուն մօտ, կնէյս կոչուած ժայռերուն մէջ, տաքութեան բարձրացումն է մէկ աստիճան 125 ոտքի համար: Արդ այս վերջին պարագան ինկատի տանելով, կ'ունենանք հազար հարիւր քսանեւհինգ ոտքի խորութիւն մը:

— Շատ չիտակ է:

— Իսկ իմ հաշիւներուս նայելով, ծովուն մակերևոյթէն 10,000 ոտք խորը հասած ենք:

— Ուրե՛մն:

— Կարելի՞ բան է:


— Այո՛:

Հօրեղբորս հաշիւները շիտակ էին: Մինչեւ հիմայ մարդոց հասած ամէնէն խոր կէտէն 6 հազար ոտք աւելի խորը հասած էինք: Ըսել է իմ հաշուովս տաքութիւնը 81 աստիճան ըլլալու էր, մինչդեռ հազիւ 15 ի կը հասնէր:

Թարգմ.

ՋԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Շարունակելի)



Փ Ո Ւ Ր Ի Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՋՐԷՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

Հ Ի Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Փ Ի Ն

(Շար. 14րդ թիւէն)

ԳԼՈՒԽ Է.

ՄԱՐԵՐԸ ԵՒ ՊԱՐԽԻԿՆԵՐԸ

ՊԱՐՄԻԿՆԵՐԸ ԿԻՐՈՍԻ ՕՐՈՎ. (559—529).

— Պարսիկները, որ թէեւ աղքատ այլ պատերազմիկ էին, կազմակերպուեցան առաջնորդութեամբ Կիւրոսին որ Մարերուն յաղթեց (559): Կիւրոս եղաւ մին այն աշխարհակալներէն որոնցմէ այնքան տեսած Ասիան. նուաճեց ու հպատակեցուց Կովկասի չըջախայ ժողովուրդները, յետոյ Լիւդացիները, որոնց Կրետոս թագաւորն ալ ձերբակալեց (547): Առաւ նաեւ Բաբելոնը (538) և բաբելական իշխանութիւնէն կախումն ունեցող բոլոր երկիրներն ալ: Ուզեց նաեւ նուաճել իւր արեւելեան գաւառաց հիւսիսակողմը թափառական շրջող վաչկատուն ու վրանաբնակ Մասգուդները կամ Մասագէտներն ալ, բայց անոնցմէ յաղթուելով մեռաւ (529):

Պարսիկներ Կամբիւսի եւ Դարեհի ՕՐՈՎ.—

Կիւրոսի որդին Կամբիւս Ափրիկէն գրաւելով զայն իրեն հպատակեցրնելու աշխարհակալական արշաւանքին ձեռնարկեց: Միայն մէկ պատերազմի մէջ Եգիպտոս ինկաւ (527), բայց երբ ուզեց յարձակիլ Կարբե-

Թոնի վրայ, այս արշաւանքին համար կա-
րելոր եղած պատերազմական նաւերն իրեն
տալ մերժեցին Փիւնիկեցիք, որպէս այսօր
Հոլանտացիք պիտի մերժէին տալ Անգլիոյ
իրենց զրահաւորները Պօէրներուն դէմ յար-
ձակելու համար. Փիւնիկեան ծագում ունե-
ցող գաղթականութիւն մըն էր կարքե-
թոն:

Բանակներէն մին զոր յղած էր Ամոնեան
ովաստիւն կամ Սուտանին բնակիչները նը-
ւաճելու համար, Սահարայի աւազներուն
մէջ թաղուեցաւ, կորաւ: Ուրիշ բանակ
մ'ալ զոր ինքն անձամբ կը վարէր, Եթով-
պացւոց կամ Հապէշիտանի դէմ, ջարդ ու
փշուր կոտորուեցաւ, եւ միայն քանի մը
բեկորներ անկէ վերադարձուց իրեն հետ:
Զինքն այնքան սրտնեղեցին այս չարագու-
շակ ձախողութեան որ անոնց վրէժը լու-
ծելու համար քուրմերը հալածեց: Օր մը
այնքան բուռն բարկութեամբ ցափեց իր
ձիուն վրայ, որ ինկաւ ու մէջքը կախուած
սուրը կուշտը մտնելով մեռաւ (522): Պարս-
կաստանի ամէնէ աւելի առաջաւոր իշխան-
ներէն Եօթը հոգիներ յաջողեցան արտաք-
սել Շմերտ մողը եւ իրենցմէ մին՝ Վշտասպայ
որդին՝ Դարեհը թագաւոր հռչակուեցաւ:
Բարեկոնի առումն այս անգամ համբաւաւոր
է Զոպիրոսի տիրապետական անձնուիրու-
թեամբ (517):

Դարեհ իր երկու նախորդներէն վար չի
մնալու համար փորձեց Եւրոպան աշխարհա-
կալել, հասաւ Վոսփոր, անցաւ Դանուբը եւ
միւսեցաւ այժմեան Ռուսիոյ դաշտերը՝ Սկիւ-
թացիները հալածելու համար. առանց ա-
նոնց ետեւէն հասնիլ կարենալու: Վերա-
դարձին՝ 80,000 մարդիկ թողուց Թրակիոյ
աշխարհակալութիւնն վերջնականապէս ի
գլուխ հանելու համար: Իր տեղակալներն
իր իշխանութեան երկու ծայրերուն մէջ նը-
ւաճեցին Պարսէն Սիւրէնահգի մէջ (509), եւ
Ինդոսի աջ գետափունքի երկիրները: Պարս-
կական տիրապետութիւնն յայնժամ իր գա-
գաթնակէտն հասաւ. Ինդոսդէ մինչեւ Մի-
ջերբական, Դանուբէն եւ Նրատիէն մինչեւ
Հնդկական ովկէանոս, ամէնքը կը հնազան-
դէին Մեծն Դարեհի: Բայց Մարական պա-
տերազմները պիտի ցնէին թէ շատ խա-
խուտ հիման վրայ կեցած է Պարսից իշխա-
նութիւնը:

Մարերն ու Պարսիկները քիչ յիշատա-
կարաններ կանգնեցան, այսու ամենայնիւ
հիները կը գովասանէին Եկրատանը, եւ
այժմեանները կը ցան հիացմամբ դիտել Պեր-
սեպոլիսի մեծաշուք աւերակները,

(Շարունակելի)

Անխելքը ամէն բանի կը հաւատայ, ա-
պուշը բանի մը չհաւատար:

— Ամէն բանի յարմարողը՝ բան մը
չարժէր:

— Բարեկամ մը զոր պահել կ'ուզենք,
բնաւ չփորձենք:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Ամասիա, Հ. էֆ. Խ. — Զրկուեցաւ Իբրանոս-
եան աղջկանց վարժարանին 1-14 թիւերը: Զատ
նամակ գրուած է:

Թոքատ, Խ. էֆ. Գ. Թ. — Զրկուեցաւ այցա-
քաղերն ու Հանրագիտակներն Տրդ թիւէն սկսեալ:
Նոյնպէս նոր բաժանորդին ալ 1-14 թիւերն: Զատ
նամակ գրուեցաւ:

Դասթէմունի, Տ. էֆ. — Այցաքարտերը Զիլէ
եւ Հանրագիտակի 1-14 թիւերը Սամսոն Տ. էֆ.
Ն. ի զրկուեցաւ:

Ատանա, Մ. էֆ. Յ. Պ. — Ստացանք զրուծիւն-
նիդ, շնորհակալութիւն:

Մարզուան, Կ. էֆ. Գ. Գ. — Շնորհակալութիւն
ձեռ սրտագին բարեացակամութեան: Կը հրատարակ-
ուի:

Աֆ. Գարահիսար, Ա. էֆ. Պ. — Այո՛, մի մի-
այն տպագրելի ձեռագիրները յորս անկիւնները կը տ-
րուած պահարանի մէջ դրուելով 10 փարայի թղ-
թաղորշով կուգան: — Զրկած վերջին զրուծիւնիդ
սիրով պիտի հրատարակուին՝ եթէ շարունակութենէն
բաւական մաս մ'ալ զրկէք, որովհետեւ անոնց հա-
մար պէտք եղած պատկերները փորագրել սկսինք:
Մարզուան, Յ. էֆ. Թ. Տ. — Շնորհակալու-
թեամբ կ'ընդունուին ըսածնիդ:

Տարէնտէ, Մ. էֆ. Թ. — Շատ ուշ մնացած է:

Շ. Գարահիսար, Գ. էֆ. Յ. Պ. — Ստացանք
թերթը կը շարունակուի:

Արեւելան Մամուլի Խմբագրութիւնը հե-
տեւեալը կը ծանուցանէ իր բաժանորդնե-
րուն. — «Գոհութեամբ կը ծանուցանենք թէ
ի զիւրութիւն Կ. Պոլսոյ մեր Մեծ. Բաժա-
նորդաց Թերթիս գործակալութիւնը ստանձ-
նած է Մեծ. Վարդան էֆ. Կ. Վարդանեան

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը հրատարակուի ամեն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին


Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ		ՀԱՍՑԷ		ԳԱՒԱՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	40 դահեկան	ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ		Տարեկանը	45 դահեկան
Վեցամսեան	20 »			Վեցամսեան	25 »
Եռամսեան	10 »	Կ. ՊՈԼԻՍ		Եռամսեան	12 1/2 »
ՌՈՒՍՏՈՅ ՀԱՄԱՐ		ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ԺԱՏՏԷՍԻ		ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	4 րուպլի			Տարեկանը	10 ծրանք
		ԹԻԼ 61			

Ձեռքէ կը ծախուի հատը 40 փարսոյ

(Պայպլ Հառուգ) : Հետեւապէս Ա. Մամոյ բաժանորդագրուիլ փափաքողք կարող են զիմե վերոյիշեալ հասցէին :

« Աւելորդ չլինիր յայտնել նաեւ թէ ի զիւրութիւն մեր Մեծ . Բաժանորդաց բաժնեգնոյ գանձումներն պիտի կատարէ Մեծ . Վարդան էֆ . Կ . Վարդանեան , ի ձեռին ունենալով Ա . Մամոյ , ընկալագիրներն , ստորագրուած եւ կնքուած Խմբագրութեանս կողմէ , ուստի կը խնդրուի մեր Արգոյ Բաժանորդներէն վճարել յիշեալին իրենց ներկայացած ժամանակ :

« Ա . Մամոյ ձեռքէ կը ծախուի հատը երեք զրուշ : Փափաքողք կրնան զիմե մեր Գործակալին եւ ի Պահճէ Գարու , թիւ 59 , Մեծ . Նշան էֆ . Օգանեանի » :



ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մեր Մեծ . Բաժանորդներու կողմէ եղած որ եւ իցէ յանձնարարութիւն սիրով եւ առանց փոխարինութեան կը կատարենք՝ եթէ յանձնարարութեան հրամանին հետ արժէքն ալ ԿԱՆՆՈՒԿ զրկուի , հակառակ պարագային , չենք կարող որ եւ իցէ յանձնարարութիւն կատարել ԱՊՍՈՒԿ :

Նոյնպէս , այցաքարդերու յանձնարարութիւնները 100 հատի վրայ կ'ընդունուին , իսկ 50 հատ եղած տպագրանքերն չենք կարող ընդունիլ :

ՀՈՒԾՈՒՄ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒ

25. ՍԵՐ ՍԵՌ ՍԵՐ
26. ԿԱՂԱՄԱՐ

Լուծեցին Յարութիւն Նիկողոսեան եւ Մելքոն Մեքենեան , աշակ Իբրանոսեան վարժ . Ամասիա :

27. — ՀԱՆԵԼՈՒԿ

- | | | | | | | | |
|-----|---|---|---|---|---|---|---|
| 1. | . | . | . | . | . | . | . |
| 2. | . | . | . | . | . | . | . |
| 3. | . | . | . | . | . | . | . |
| 4. | . | . | . | . | . | . | . |
| 5. | . | . | . | . | . | . | . |
| 6. | . | . | . | . | . | . | . |
| 7. | . | . | . | . | . | . | . |
| 8. | . | . | . | . | . | . | . |
| 9. | . | . | . | . | . | . | . |
| 10. | . | . | . | . | . | . | . |
| 11. | . | . | . | . | . | . | . |
| 12. | . | . | . | . | . | . | . |

1. Կազային մարմին մը . — 2. Պտուղ մը . — 3. Ափրիկէի մէջ լեռնաշղթայ մը . — 4. Տաճկաստանի մէջ ծով մը . — 5. Չաստուած մը . — 6. Եւրոպիոյ մէջ երկիր մը . — 7. Թուրքիոյ ծովեզերեայ նահանգ մը . — 8. Ասիոյ մէջ լիճ մը . — 9. Յարգի քար մը . — 10. Մարմնոյ մէկ մասը . — 11. Եւրոպիոյ մէջ գետ մը . — 12. Խոտ մը .
Ա . Կ . ԿՏԱԻՃԵԱՆ

28. ՀԱՐՑՈՒՄ

Ի՞նչպէս կ'ըլլայ որ մէկ լեցուն շիշ զինին հաւասար կ'ըլլայ մէկ պարսպ շիշի :

29. ՀԱՆԵԼՈՒԿ

Եռատու մէկ խաղալիկ
Ձոր սիրին համայն մանկիկ,
Բայց երբ զիր մը ջնջուի՝
Կիզբէն՝ նա պատկանի
Գեղեցիկ սեռի :

ԽՄԱԴՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԷՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐ ԶԳԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ



Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ տանող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ գոհացում տալ նոյն իսկ էն խստապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հառտատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը կատարուին ամենայն ճշգուծեամբ.

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք ան- դամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի կից թիւ 10, ուր պիտի դտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա. Ժ. Ա. Ն

Ա. Ժ. Ա. Ն

Ա. Ժ. Ա. Ն

Տպագրիչ եւ Փորագրիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ԶԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 61.

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասանա, Յակոբ էֆ. Պօղոսեան
Ասափազար, Ստեփան էֆ. Սափրիչեան
Աֆրոն Գարանիսար, Աշոտ էֆ. Պաղպաղեան
Եւրոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաչճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Խարբերդ, Ռուբէն էֆ. Զարդարեան
Կիւրիկ, Միսաք էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Ամատեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաչճեան
Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Աղաբեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան
Սիմ հանի քոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիր քոքրի » » »
Տիարաքիի, Լեոն էֆ. Սրապեան

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Հին Ուխտի (Սրբազան պատմութիւն) 4
Նոր » » » 4
Ծաղկաքաղ (Ընտիր կտորներ ընթերց.) 3
Փրանսերէն պատկերազարդ Քերական 2
Կ. Տէմիրեան էֆ. Ի Իրագիտութեան
Ամբողջական դասընթացքը 1
Ծաղկաքաղ եկեղեցական պատմութեան 4
Քրիստոնէական (Ս. Խանճեան) 2
Ժողովրդական Տարեցոյց 6
Բուրաստան Մանկանց (Տարեկանը) 10
Աղօթագիրք 10



Հանրագիտակ ձեռքէ կը ծախուի Պոլսոյ մէջ հատը
40, իսկ գաւառաց մէջ 50 փարսյ: